ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 21-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 14.03.2023թ. թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ***Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 22.11.2024թ.

Հավելված
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-
ներքին գործերի նախարարի տեղակալի
« 22 » նոյեմբերի 2024թ. N 21-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) պետական պահպանության գլխավոր վարչությունը (այսուհետ՝ գլխավոր վարչություն) ոստիկանության կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Գլխավոր վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) սահմանադրությամբ, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով, սույն կանոնադրությամբ և ՀՀ ներքին գործերի նախարարի, ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի և վերջինիս համակարգող տեղակալի հրամաններով:

3. Գլխավոր վարչությունը ստեղծվում և նրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Գլխավոր վարչության անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն,
2) ռուսերեն՝ Главное управление государственной охраны Полиции министерства внутренних дел Республики Армения,
3) անգլերեն՝ General Department of State Protection of the Police of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
4) ֆրանսերեն՝ Département Général de la protection de l'État de la Police du Ministère des Affaires Intérieures de la République d'Arménie:

5. Գլխավոր վարչությունն ունի իր անվամբ և ՀՀ պետական զինանշանի պատկերով կլոր կնիք: Գլխավոր վարչությունը կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Գլխավոր վարչության աշխատողները ոստիկանության ծառայողներ, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք են:

7. Գլխավոր վարչության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ.Սարգսյան փողոց, 1/1 հասցեն:

2. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Գլխավոր վարչության նպատակն է իր ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների ուժերով պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների և կարևորագույն նշանակության օբյեկտների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց շենք-շինությունների պահպանության կազմակերպումը, քրեական վարույթին և քրեական դատավարությանը ներգրավված ու պաշտպանության կարիք ունեցող անձանց պաշտպանության ապահովումը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովումը, ինչպես նաև հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների, բեռների և այլ շարասյուների ուղեկցումը:

9. Գլխավոր վարչության խնդիրներն են.

1) ենթակա ստորաբաժանումների ուժերով՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների և կարևորագույն նշանակության օբյեկտների, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող այլ օբյեկտների պահպանությունը, ինչպես նաև հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների, բեռների և այլ շարասյուների ուղեկցումը Հայաստանի Հանրապետության տարածքում,

2) պահպանության աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակումը,

3) հասարակական կարգի ու անվտանգության ապահովման գործում ծառայության կազմակերպումն ու ապահովումը,

4) պաշտպանության կարիք ունեցող քրեական վարույթին և քրեական դատավարությանը ներգրավված անձանց պաշտպանությունը,

5) հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման, հայտնաբերման և բացահայտման գործում ոստիկանության տարածքային կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության ապահովումը,

6) հանցավոր խմբերի վնասազերծումը, այդ ոլորտում այլ հատուկ ծառայությունների հետ փոխհամագործակցության ապահովումը:

3. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Գլխավոր վարչությունը կազմված է կառուցվածքային և ենթակա ստորաբաժանումներից:

11. Գլխավոր վարչության կառուցվածքային ստորաբաժանումներն են.

1) ծառայության վարչությունը՝

ա) ծառայությունների համակարգման բաժինը, որը բաղկացած է ծառայության վերահսկման և մոնիթորինգի բաժանմունքից, շարային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժանմունքից, հերթապահ ծառայությունից,

բ) շնավարժության բաժինը, որը բաղկացած է թմրանյութերի հայտնաբերման և ընդհանուր հետախուզական շնավարժության բաժանմունքից, զենք-զինամթերքի և պայթուցիկ նյութերի հայտնաբերման բաժանմունքից,

2) տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման վարչությունը՝
ա) տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման բաժինը,
բ) մոնիթորինգի բաժանմունքը,

12. Գլխավոր վարչությանը ենթակա ստորաբաժանումներն են.

1) հատուկ նշանակության գումարտակը,
2) ուղեկցող սպայական վաշտը,
3) քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության աշխատանքների կազմակերպման բաժինը,
4) կարևորագույն օբյեկտների և հիմնարկ ձեռնարկությունների պահպանության գունդը,
5) Կենտրոնական պահպանության բաժինը,
6) Արաբկիրի պահպանության բաժինը,
7) Էրեբունու պահպանության բաժինը,
8) Նոր Նորքի պահպանության բաժինը,
9) Քանաքեռ-Զեյթունի պահպանության բաժինը,
10) Մալաթիայի պահպանության բաժինը,
11) Մաշտոցի պահպանության բաժինը,
12) Շենգավիթի պահպանության բաժինը,
13) Կոտայքի պահպանության բաժինը,
14) Հրազդանի պահպանության բաժինը,
15) Իջևանի պահպանության բաժինը,
16) Վանաձորի պահպանության բաժինը,
17) Թումանյանի պահպանության բաժինը,
18) Գյումրու պահպանության բաժինը,
19) Աշտարակի պահպանության բաժինը,
20) Վաղարշապատի պահպանության բաժինը,
21) Սևանի պահպանության բաժինը,
22) Արտաշատի պահպանության բաժինը,
23) Եղեգնաձորի պահպանության բաժինը,
24) Գորիսի պահպանության բաժինը,
25) Կապանի պահպանության բաժինը,
26) թիվ 1 ռազմականացված ջոկատը,
27) թիվ 3 ռազմականացված ջոկատը:

4. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Գլխավոր վարչությունը, իր վրա դրված խնդիրների կատարումն ապահովելու համար, սահմանված կարգով՝

1) կազմակերպում և ապահովում է ծառայության կատարելագործմանն ու զարգացմանն ուղղված հեռանկարային և ընթացիկ միջոցառումների իրականացումը,

2) ուսումնասիրում, ամփոփում և ենթակա ստորաբաժանումների ծառայողական գործունեության մեջ ներդնում է գույքի պահպանության, ինչպես նաև հասարակական կարգի ապահովման, հանցագործությունների դեմ պայքարի գործում ուժերի և միջոցների առավել արդյունավետ օգտագործման ձևերն ու մեթոդները,

3) գործնական և կազմակերպչական միջոցառումներ է ձեռնարկում՝ ուղղված պայմանագրային հարաբերությունների կատարելագործմանը: Մշակում է իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքվող պայմանագրերի օրինակելի նախագծեր,

4) որոշում է /ըստ ծառայությունների/ գործունեության հիմնական ուղղությունները, ապահովում է ենթակա ստորաբաժանումների կազմակերպական-մեթոդական ղեկավարումը,

5) անհրաժեշտ միջոցառումներ է իրականացնում վերակարգերի ծառայության վերահսկման, նրանց գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

6) իրականացնում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ մասերի և հերթապահ ծառայությունների գործունեության կազմակերպման կարգը սահմանող իրավական ակտերով նախատեսված հերթապահ ծառայությանը վերաբերելի գործառույթներ,

7) ապահովում է ենթակա ստորաբաժանումների և ոստիկանության տարածքային մարմինների փոխհամագործակցությունը՝ հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման աշխատանքներում,

8) ենթակա ստորաբաժանումներում պարբերաբար իրականացնում է մեթոդական, գործնական օգնություն և վերահսկողություն՝ անլուր և բացահայտ ստուգումների միջոցով,

9) կազմակերպական և մեթոդական օգնություն է ցույց տալիս ենթակա ստորաբաժանումներին՝ վերակարգերի գործունեությունը պատշաճ կազմակերպելու նպատակով,

10) միջոցներ է ձեռնարկում շնաբուծական ծառայության զարգացման, ծառայողական շների հնարավորությունները պահպանության բնագավառում և հանցագործությունների բացահայտման աշխատանքներում օգտագործելու նպատակով,

11) միջոցառումներ է ձեռնարկում ռազմականացված ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների որակի կատարելագործման ուղղությամբ,

12) աշխատանքներ է տանում Գլխավոր վարչության աշխատողների համար աշխատանքի պատշաճ պայմաններ ստեղծելու, ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում նրանց անվտանգությունն ապահովելու, պահակետերն օպերատիվ կապի միջոցներով և զննման տեխնիկայով կահավորելու ուղղությամբ,

13) վերահսկողություն է իրականացնում ենթակա ստորաբաժանումների կողմից պահպանվող օբյեկտներում անցագրային ռեժիմի սահմանված կարգի իրականացման նկատմամբ,

14) սահմանված կարգով պլանավորում և իրականացնում է օբյեկտների պահպանության վիճակի ստուգումներ,

15) ապահովում է Գլխավոր վարչությունում քաղաքացիական պաշտպանության միջոցառումները, մշակում է քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային ոլորտի պլանները,

16) վերլուծում է ենթակա ստորաբաժանումներում կադրերի ընտրության և տեղաբաշխման հարցերը, համալիր միջոցառումներ է իրականացնում Գլխավոր վարչության ծառայողների մասնագիտական պատրաստականության մակարդակի բարձրացման, օրինականության և կարգապահության ամրապնդման, սոցիալական և իրավական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ,

17) սահմանված կարգով աջակցում է Գլխավոր վարչությունը կադրերով համալրելու, աշխատողների ուսուցման և վերապատրաստման աշխատանքներին,

18) ենթակա ստորաբաժանումներում աշխատողների կողմից օրինականության և կարգապահության խախտման փաստերով ներկայացնում է համապատասխան զեկուցագրեր,

ուսումնասիրում է դրանց կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները, մշակում և իրականացնում է միջոցառումներ դրանց նախականխման համար,

19) ծառայողների մասնագիտական պատրաստականության բարձրացման, առաջավոր փորձի ուսումնասիրման, ներդրման, ծառայության կատարելագործման և այլ կարևոր հարցերով կազմակերպում և անցկացնում է հավաքներ, խորհրդակցություններ, սեմինար պարապմունքներ,

20) ուսումնասիրում և քննարկում է Գլխավոր վարչության ծառայողներից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված դիմումները, զեկուցագրերը, բողոքներն ու առաջարկությունները, գործնական միջոցներ է ձեռնարկում դրանց լուծումներ տալու ուղղությամբ,

21) հետագա ներդրման նպատակով ապահովում է պահպանության տեխնիկական միջոցների նմուշների փորձարկումը, որոշում դրանց գործնական կիրառման նպատակահարմարությունը,

22) օժանդակում է իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ վերջիններիս գույքի անվտանգության ապահովման միջոցառումների մշակման հարցերում,

23) պայմանագրային հիմունքներով իրականացնում է օբյեկտների պահպանությունը անվտանգության տեխնիկական միջոցներով,

24) միջոցառումներ է իրականացնում պահպանության բնագավառում ավտոմատ կառավարման և օպերատիվ կապի համակարգերի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ,

25) միջոցներ է ձեռնարկում Գլխավոր վարչության և ենթակա ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի կատարելագործման և արդիականացման ուղղությամբ,

26) օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է քրեական վարույթին և քրեական դատավարությանը ներգրավված անձանց պաշտպանությունը,

27) ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ պաշտպանության միջոցների իրականացման նպատակով ծառայությունների մատուցման ապահովման ուղղությամբ,

28) անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձին տրամադրում է անհատական պաշտպանության միջոցներ, վերջինիս բացատրում և ուսուցանում է դրանց հետ վարվելու, օգտագործելու և պահպանելու կարգը,

29) աջակցում է հասարակական կարգի պահպանությանը և հասարակական անվտանգության ապահովմանը,

30) նախականխում, կանխում, հայտնաբերում և բացահայտում է հասարակական վայրերում հանցագործություններն և վարչական իրավախախտումները,

31) իր իրավասության սահմաններում կազմում է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ և ուղարկում ըստ ենթակայության,

32) ապահովում է հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը զանգվածային միջոցառումների ժամանակ,

33) ապահովում է հանցավոր խմբերի վնասազերծումը և փոխհամագործակցությունը այդ ոլորտում հատուկ ծառայությունների հետ,

34) սահմանված դեպքերում ուղեկցում է ծանրաքաշ և /կամ/ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով իրականացվող փոխադրումները,

35) ուղեկցում է հատուկ բեռներ,

36) իրականացնում է հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների ուղեկցումը և էսկորտ ուղեկցումը,

37) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է տրանսպորտային այլ միջոցների և շարասյուների ուղեկցումը,

38) իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս համագործակցում է այլ իրավապահ մարմինների հետ,

39) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

5. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

14. Գլխավոր վարչությունը ղեկավարում է գլխավոր վարչության պետը:

Գլխավոր վարչության պետը՝

1) իրականացնում է Գլխավոր վարչության անմիջական ղեկավարումը, անձնական պատասխանատվություն է կրում Գլխավոր վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների պատշաճ կատարման համար,

2) որոշում է Գլխավոր վարչության գործունեության հիմնական ուղղությունները, հսկում նրա զարգացման հայեցակարգի մշակման և իրականացման աշխատանքները, միջոցներ է ձեռնարկում իրավախախտումների և հանցագործությունների դեմ պայքարում, հասարակական կարգի և անվտանգության ապահովման գործում ենթակա ստորաբաժանումների ակտիվ մասնակցությունն ապահովելու ուղղությամբ, արտակարգ իրավիճակների դեպքերում՝ ղեկավարում և համակարգում է ենթակա ստորաբաժանումների գործողությունները,

3) իրականացնում է իր տեղակալների միջև գործառույթների բաշխումը,

4) սահմանված կարգով ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին է ներկայացնում առաջարկություններ ենթակա ստորաբաժանումների կառուցվածքի և հաստիքացուցակների փոփոխության վերաբերյալ,

5) իր իրավասության սահմաններում իրականացնում է Գլխավոր վարչության կադրերի ընտրությունն ու տեղաբաշխումը, ապահովում է վերջիններիս մասնագիտական պատրաստականության բարձրացումը, ինչպես նաև իրականացնում է հսկողություն օրինականության պահպանման, ծառայողական կարգապահության, գաղտնիության ռեժիմի և ներքին կարգ ու կանոնի ամրապնդման ուղղությամբ,

6) սահմանված կարգով, իր իրավասության սահմաններում, միջնորդություններ է ներկայացնում Գլխավոր վարչության ծառայողներին պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու կամ այլ պաշտոնի տեղափոխելու մասին,

7) ոստիկանության կրտսեր խմբի ծառայողներին շնորհում է հերթական կոչումներ: Միջնորդագրեր է ներկայացնում գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին հերթական կոչումներ շնորհելու մասին,

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ոստիկանության գերատեսչական իրավական ակտերին համապատասխան պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է կրտսեր խմբի ծառայողներին, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներին,

9) իր իրավասության սահմաններում Գլխավոր վարչության անձնակազմին տրամադրում է արձակուրդ,

10) ներկայացնում է Գլխավոր վարչությունը պետական մարմիններում և կազմակերպություններում: Համապատասխան լիազորագրի առկայության դեպքում կնքում է քաղաքացիաիրավական պայմանագրեր, Գլխավոր վարչության անունից իրականացնում այլ գործարքներ, լիազորագրեր է տալիս այդպիսի գործարքների կատարման համար,

11) ներկայացնում է առաջարկություններ և փաստաթղթեր՝ ոստիկանության ղեկավարության մոտ անցկացվող օպերատիվ խորհրդակցություններում պահպանության ծառայության գործունեությանը վերաբերվող հարցերի քննարկման վերաբերյալ,

12) ապահովում է պահպանության ստորաբաժանումների անձնակազմի գործողությունների վերաբերյալ ստացված դիմումների, զեկուցագրերի, բողոքների և առաջարկությունների քննարկումն ու լուծումը,

13) իր իրավասության սահմաններում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարություններ,

14) իր իրավասության սահմաններում խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում ենթակա ծառայողներին և աշխատողներին, ինչպես նաև այդ նպատակով միջնորդություններ է ներկայացնում ոստիկանության ղեկավարությանը,

15) սահմանված կարգով միջնորդում է ՀՀ ՆԳՆ իրավասու ստորաբաժանմանը՝ Գլխավոր վարչության և ենթակա ստորաբաժանումների հաշվեկշռից մաշված և օգտագործման համար ոչ պիտանի գույքի դուրս գրման համար,

16) կազմակերպում է պահպանության ծառայության զարգացմանը, նրա գործունեության նորմատիվ բազայի կատարելագործմանը, Գլխավոր վարչության առջև դրված խնդիրների կատարմանն ակտիվորեն նպաստած աշխատողների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների խրախուսումը,

17) ղեկավարում Է Գլխավոր վարչության օպերատիվ խորհրդակցությունները,

18) իրականացնում է ոստիկանության իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

15. Գլխավոր վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է առաջին տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տեղակալներից որևէ մեկը: